ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՊՀ պրոռեկտոր
Ռ. Բարխուդարյան

ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի իրանագիտության ամբիոնի 2026թ.-ի փետրվարի 13-ի նիստի

Նիստին ներկա էին՝ ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., պրոֆ. Վ. Ոսկանյանը, բ.գ.թ., պրոֆ. Գ. Մելիքյանը, պ.գ.թ., դոցենտ Լ. Պետրոսյանը, բ.գ.թ., դոցենտ Հ. Ավչյանը, բ.գ.թ., դոցենտ Ն. Դարբինյանը, Գ. Միսակյանը, Ա. Վարդանյանը և այլք:

Լսեցին՝ Հայկ Սողոմոնյանի «Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները 1940-1950-ական թթ.» պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկման հարցը (գիտական ղեկավար՝ պ.գ.թ. դոցենտ Գոհար Իսկանդարյան):

Արտահայտվեցին՝ Վ. Ոսկանյանը, Գ. Մելիքյանը, Լ. Պետրոսյանը, Գ. Միսակյանը, Ա. Վարդանյանը և այլք՝ նշելով, որ.

Ատենախոսության թեման ուշագրավ է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրանա-բրիտանական հարաբերությունները դեռևս 17-րդ դարից անցել են բավական երկար և բարդ շրջափուլերով՝ ի վերջո հանգեցնելով մինչև օրս շարունակվող տարատեսակ աշխարհաքաղաքական լարումների: Այս երկու պետությունների միջև հարաբերությունների՝ հատկապես 1940-50 ական թվականներն ընդգրկող շրջափուլին անդրադարձը ուշագրավ է հաշվի առնելով այն, որ մի կողմից ընդգրկվում է Երկրորդ համաշխարհայինի ընթացքում Իրանի պատմության համար մեծապես կարևոր միջազգային և քաղաքական զարգացումները, իսկ մյուսից՝ 1951թ. տեղի ունեցած, չենք վախենա ասել,

ճակատագրական նշանակություն ունեցող իրանական նավթի ազգայնացման գործընթացը և դրան հետևած արտաքին և ներքին քաղաքական փոփոխությունները:

Ատենախոսին հիմնականում հաջողվել է իր իսկ նախանշած հիմնական ուղղություններով հասնել գիտական խնդիրների առաջադրմանը, նկարագրությանը, վերլուծությանը և դրանից բխող վերլուծություններին: Գովելի է հատկապես տեսական այն շրջանակի հստակ նախանշումը, որի ծիրում էլ իրականացվել է ատենախոսության շարադրումը:

Աշխատանքը մեծամասամբ շարադրված է խնամքով և պարզորոշ է, որ հեղինակը տիրապետում է ուսումնասիրության թեմայի առանձնահատկություններին և նրբություններին, ինչպես նաև քաջատեղյակ է թեմայի ուսումնասիրության պատմությանը:

Այսուհանդերձ, ընդհանուր առմամբ, արժեքավոր գնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտական աշխատանքը, պետք է նշել, որ դրանում առկա են որոշ թերություններ և բացթողումներ՝

1. **Հետազոտության նպատակների և արդյունքների համապատասխանություն.** աշխատանքի «Նպատակներ և խնդիրներ» բաժնում նշվել է 1941-1945 թթ. Իրանի տարածք Մեծ Բրիտանիայի ներխուժման և ռազմական ներկայության իրական պատճառների ու շահերի վերլուծությունը, սակայն այս դրույթը լիարժեքորեն չի իրացվել: Թեև հեղինակը 1.1 գլխում հավակնում է արխիվային նոր նյութերի հիման վրա ի հայտ բերել «տարածված կարծիքից նշանակալիորեն տարբերվող նրբություններ», դա հստակորեն չի արտացոլվում ո՛չ շարադրանքում, ո՛չ էլ եզրակացություններում: Մասնավորապես՝
    - Ցանկալի կլիներ առավել խորությամբ քննարկել դաշնակիցների կողմից Իրանի ռազմակալմանը նախորդած շրջանում Ռեզա շահի, Բրիտանիայի կառավարության և «Անգլո-իրանական նավթային

ընկերության» միջև տեղի ունեցած բանակցությունները: Դա թույլ կտար նաև վեր հանել Իրանում նավթի ազգայնացման գաղափարի ծագման իրական պատճառները:

- Աշխատանքում պատշաճ ուշադրություն չի դարձվել Իրանի տարածքով ԽՍՀՄ-ին փոխանցվող ռազմական օգնությանը, ինչը Համաշխարհային պատերազմի համատեքստում ունեցել է բեկումնային նշանակություն:
- Ռեզա շահի գահազրկման պատճառների վերաբերյալ հեղինակի պնդումը, թե դա պայմանավորված էր բացառապես նավթի գների շուրջ տարաձայնություններով, թերի է և ոչ շատ կուռ հիմնավորված: Կարծում ենք, որ անհրաժեշտ էր դիտարկել Ռեզա շահի ներքաղաքական առաջնորդության խանդիրը, նրա չեզոքության քաղաքականությունը և Իրանի ռազմականալմանը հակազդելու փորձերը, ինչպես նաև Փահլավիների արքայատոհմի շարունակականությունն ապահովելու և գահը որդուն փոխանցելու շուրջ դաշնակիցների հետ ձեռք բերված պայմանավորվածությունները:

2. **Իրանի ներքաղաքական դինամիկայի վերլուծություն.** երկրորդ գլխում Մ. Մոսադեղի վարչապետության գործընթացին զուգահեռ անհրաժեշտ էր առավել ընդգրկուն անդրադառնալ «Ազգային ճակատ» խմբավորման ձևավորմանը: Մ. Մոսադեղի խորհրդարանական ելույթների վերլուծությունը թույլ կտար աշխատանքի մեթոդաբանական հիմքում դրված տեսությունների լույսի ներքո հստակ ցույց տալ իրանա-բրիտանական հակասությունների հիմքերն ու հակաբրիտանական ներքաղաքական համախմբվածության պատճառները:

3. **1953 թ. հեղաշրջման և աղբյուրների քննադատական վերլուծություն.** 1953 թ. ռազմական հեղաշրջմանն անդրադառնալիս ցանկալի կլիներ քննարկել նաև հեղաշրջման վերաբերյալ Մոհամմադ Ռեզա շահի դիրքորոշման

փոփոխությունները, Աշրաֆ Փահլավիի դերակատարումն ու արտաքին ուժերի ազդեցությունը: Սա հնարավորություն կտար հեղինակին ավելի քննադատաբար մոտենալ Ֆարահ Փահլավիի հուշերին (էջ 108): Ցանկալի կլիներ օգտագործել Ե. Աբրահամյանի *The Coup: 1953, the CIA, and the Roots of Modern U.S.-Iranian Relations* աշխատությունը, որն ընդգրկում է արխիվային ուշագրավ նյութ:

- Ատենախոսի այն պնդումը, թե Մ. Մոսադեղի կառավարությունը դատապարտված էր տապալման նույնիսկ առանց օգոստոսյան դեպքերի, կրում է ենթադրական բնույթ: Հաշվի չի առնվում այն փաստը, որ, այնուամենայնիվ, կառավարությունը տապալվել է արտաքին հետախուզական կառույցների հատուկ գործողության հետևանքով, ինչի վերաբերյալ առկա են հրապարակված պաշտոնական փաստաթղթեր:

4. **Գիտական ձևակերպումների հստակությունը.** եզրակացություններում տեղ գտած այն ձևակերպումը, թե Իրան-Բրիտանիա հարաբերությունները և այդ պետության ռազմակալումն ուներ «գաղութատիրական բնույթ», իրավացիորեն վիճելի է: Իրանը դասական իմաստով երբեք չի հանդիսացել Մեծ Բրիտանիայի գաղութը, իսկ բրիտանական քաղաքականությունն ունեցել է ավելի բարդ և բազմաշերտ դրսևորումներ:

5. **Տեխնիկական և մատենագիտական ձևավորում.** ատենախոսությունը կշահեր, եթե օգտագործված գրականության ցանկում պարսկալեզու (արաբատառ) աղբյուրները ներկայացվեին լատինատառ տառադարձմամբ՝ համաձայն միջազգային ստանդարտների, որպեսզի պարսկերենին չտիրապետող անձի համար ևս դրանց հղումները հասկանալի լինեին, ինչպես նաև խուսափել գրականության կրկնակի հղումներից (օրինակ՝ Ե. Աբրահամյանի *Iran Between Two Revolutions* աշխատության թե՛ բնօրինակի, թե՛ թարգմանության

միաժամանակյա օգտագործումից, եթե դրանք բովանդակային առումով նույնական են):

Որոշեցին՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը, քննարկելով Հայկ Սողոմոնյանի «Իրան-Մեծ Բրիտանիա հարաբերությունները 1940-1950-ական թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, գտնում է, որ այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ամբիոնը երաշխավորում է ատենախոսության հրապարակային պաշտպանությունը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ 006 մասնագիտական խորհրդում, իսկ ատենախոսն արժանի է հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի վարիչ՝ Վ. Ոսկանյան

Վ. Ոսկանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտքարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

13.02.2025